# ՈՒՐԴԸ ՎՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԴՐՎԱԾ ԴԱՏԱՎՃԻՌԸ

## ՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՇԱՅԿԱՆ ՍՐԲՎԵՑ ՐԻ ՅԵՐԵՍԻՑ

## ՄՈՍԿՎԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՏԻՆԳԸ ԿԱՐՄԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Համախորհրդային տրոցկիստական կենտրոնի դատավարությանը ներկա գտնվող՝ Մոսկվայի ֆաբրիկների ու գործարանների ստախանովականները գիշերային հերթափոխերի միտինգներում բանվորներին հաղորդեցին արդարացի դատավճռի մասին: Միտինգներին մասնակցողները վորոշեցին հունվարի 30-ին դուրս գալ մայրաքաղաքի փողոցները, մարդասպանների տրոցկիստական բանդայի նկատմամբ, ֆաշիստական պահնորդական բաժինների լկտի լակեյների նկատմամբ իրենց անսահման ցասումն ու անարգանքը ցուցադրելու համար, Լենին-Ստալինի կուսակցության, նրա ղեկավարների, ժողովուրդների առաջնորդ հարազատ Ստալինի նկատմամբ իրենց ջերմագին սերն ու նվիրվածությունը կրկին ու կրկին անգամ արտահայտելու համար:

Տրանսպարանտները, լոզունգներն անարգանքի սյունին են գամում ստոր տրոցկիստներին— ժողովրդի թշնամիներին, կոչ են անում բարձրացնել զգաստությունը, պայքարել հանուն սոցիալիզմի նորանոր հաղթանակների: Կան բազմաթիվ կարիկատուրաներ: Ահա նրանցից մեկի վրա նկարված է ֆաշիզմի շղթայակապ շուն Տրոցկին, մյուսի վրա՝ նողկալի իժ Պյատակովը:

Մթնշաղի մեջ պարզ նշմարվում են կարմիր կտավների վրա գրված լոզունգների խոսքերը—

— Կեցցե՛ մեր սիրելի Ստալինը:

— Աչքի լույսի պես պահպանենք ժողովրդի առաջնորդներին: Ավելի բարձր հեղափոխական զգաստությունը:

— Ջերմագին վողջույն պանծալի չեկիստներին, ներքգործժողկոմատականներին և նրանց մարտական ղեկավար ընկեր Յեժովին:

— Գնդակահարել տրոցկիստներին— Հայրենիքի և դավաճաններին: Դատի տալ աջ թափթփուկներին:

Շարասյուները շարժվում են Լենինի դամբարանի առջևով:

Ժամը 17-ից 15 րոպե անց Համ. Կ (բ) Կ Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվայի Քաղաքային Կոմիտեյի քարտուղար ընկ. Խրուշչովը կուսակցության Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվայի պրոֆմիությունների անունից մայրաքաղաքի աշխատավորության միտինգը հայտարարում է բացված:

— Մենք հավաքվել ենք,—հայտարարում է ընկ. Խրուշչովը,—տալու համար մեր պրոլետարական խոսքը, ժողովրդի թշնամիների Հայրենիքի դավաճանների, աշխատավորության գործի դավաճանների, լրտեսների, դիվերսանտների, ֆաշիզմի գործակալների, ստոր ու անարգ տրոցկիստների նկատմամբ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի կայացրած դատավճռին լիակատար հավանություն տալու մեր խոսքը:

Ավարտելով իր ճառը, ընկեր Խրուշչովը բացականչում է.

— Կեցցե մեր խորհրդային կառավարությունը և նրա ղեկավար՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ ընկեր Մոլոտովը:

Կեցցե համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ, Լենինի գործի շարունակող ընկեր Ստալինը:

Այնուհետև հանդես են գալիս ՀԱՄԿԽ_ի քարտուղար ընկեր Շվերնիկը, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի նախագահ Կոմարովը, Համ. ԼԿԵՄ-ի Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվայի քաղաքային Կոմիտեյի քարտուղար ընկեր Իլյինսկին և Ձերժինսկու անվան «Տրյոխգորնայա մանուֆակտուրայի» բանվորուհի ընկեր Գուլյուգինան:

Միտինգի մասնակցողները միաձայն բանաձև են ընդունում, վորը հավանություն է տալիս տրոցկիստական բանդայի նկատմամբ կայացված դատավճռին:

«Անարգ, ժողովրդի կողմից յերիցս անիծյալ դավաճանները,— ասված է բանաձևի մեջ,— ժողովրդի յերդվյալ ու ամենավոխերիմ թշնամի Տրոցկու ղեկավարությամբ ձեռք եյին բարձրացրել մեր Հայրենիքի մեծ նվաճումների վրա, ցանկանում եյին խորհրդային հողը վողողել բանվորների ու գյուղացիների արյամբ, կապիտալիստների, կալվածատերերի ու կուլակների իշխանությունը վերականգնելու համար:

Այդ խղճուկ, չնչին արարածները հաղթանակած սոցիալիզմի նկատմամբ ունեցած ատելությունից կատաղած, փորձում եյին իրենց ավազակային պլաններն իրականացնել ճապոնական ու գերմանական իմպերիալիստների սվիններով, պատերազմ հրահրելու և մեր սոցիալիստական Հայրենիքի պարտության միջոցով:

Մենք բոլորս մեկ մարդու պես պատրաստ ենք մեր կրծքով, մեր կյանքով հաղթականորեն հետ մղելու մեր Հայրենիքի սրբազան սահմանների դեմ, սոցիալիզմի սրբազան նվաճումների դեմ թշնամու կատարած բոլոր ու ամեն տեսակի վոտնձգությունները:

Առաջ ու առաջ գնալով, ավելելով իր ճանապարհից բոլոր թշնամիներին, մեր յերկիրն ընկեր Ստալինի ղեկավարությամբ կըհասնի կոմունիզմի լիակատար հաղթանակին:

Կեցցե՛ մեր հարազատ ու սիրելի ընկեր Ստալինը»: